

## **1. Տիպարանություն**

### **Այլընտրանքային փոխանցումների համակարգերի կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա**

#### **1) Սխեմայի նկարագիրը**

Այս գործարքներին, որպես կանոն, մասնակցում են արտասահմանում<sup>1</sup> գտնվող գրասենյակներ և/կամ անհատներ (այսուհետ՝ Կազմակերպիչ), ՀՀ տարածքում գործող բանկերում հաշիվներ ունեցող կազմակերպություններ<sup>2</sup> կամ ֆիզիկական անձինք: Գործարքները կատարվում են հետևյալ սխեմայով և քայլերի հաջորդականությամբ.

Կազմակերպիչն իր գործունեության երկրի տարածքում քաղաքացիներից և կազմակերպություններից ընդունում է գումարներ, որոնք կենտրոնացվում են Կազմակերպիչի կամ նրա հետ կապված անձանց անունով բացված բանկային հաշիվներին: Հաջորդ քայլով, նշված միջոցները մեկ կամ մի քանի գումարով փոխանցվում են ՀՀ տարածքում գործող որևէ բանկ՝ այդ բանկում հաշիվ ունեցող որևէ (օֆշորային տարածքում գրանցված) կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաշվին: Ընդ որում, միջոցները կազմակերպության անվամբ փոխանցվելու դեպքում որպես նպատակ հաճախ նշվում է որևէ սպրանքի մատակարարում, ծառայության մատուցման, արժեթղթերի/ մուրհակների առուվաճառքի դիմաց վճարում, փոխառության տրամադրում/ մարում, իսկ ֆիզիկական անձանց անվամբ փոխանցվելու դեպքում՝ ֆինանսական օգնություն և այլն:

Այնուհետև, ստացված գումարները, որպես կանոն մեկ կամ մի քանի օրվա ընթացքում, շահառու իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից կանխիկ ելքագրվում են տվյալ անձի հաշվից կամ բաշխվում են նույն բանկում սպասարկվող այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հաշիվներին, որից հետո կանխիկ ելքագրվում են վերջիններիս կողմից:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված գումարների.


- Ծագման օրինականությունը հնարավոր չէ պարզել՝ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով, և
- Դրանք ստացող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք հաճախ իրենք չեն հանդիսանում այդ գումարների վերջնական շահառուն, այլ (ըստ

<sup>1</sup> Ավելի հաճախ՝ Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, հայկական գաղթօջախներ ունեցող այլ երկրներում:

<sup>2</sup> Ավելի հաճախ՝ օֆշորային տարածքներում գրանցված կազմակերպություններ:

Կազմակերպչից ստացված ցուցակի) դրանք իրենց հերթին բաշխում են վերջնական շահառու հանդիսացող անձանց:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



ա. Կազմակերպիչը Փոխանցողներ Ա, Բ, Գ-ից ընդունում է գումարներ,

բ. Հավաքագրված գումարները մուտքագրվում են Կազմակերպչի կամ նրա հետ կապված անձի բանկային հաշվին,

գ. Հաշվետիրոջ հանձնարարականով միջոցները ամբողջությամբ կամ մաս մաս փոխանցվում են ՀՀ տարածքում գործող որևէ բանկ՝ այդ բանկում հաշիվ ունեցող որևէ (օֆշորային տարածքում գրանցված) կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաշվին,

դ. Փոխանցված գումարները.

- կանխիկ ելքագրվում են տվյալ անձի հաշվից, կամ
- բաշխվում են նույն բանկում սպասարկվող այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հաշիվներին, որից հետո կանխիկ ելքագրվում են վերջիններիս կողմից (մի դեպքում փոխանցվող գումար(ներ)ի վերջնական շահառուն Հաճախորդ Ա-ն է, իսկ երկրորդի դեպքում Հաճախորդ Ա-ն հանդիսանում է միջնորդ օղակ՝ ստացված գումար(ներ)ը վերջնական շահառուներ Ստացող Ա, Ստացող Բ և մյուսների միջև բաշխելու համար):

### 3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա **ֆինանսական հաստատության հաճախորդների կողմից արտերկրից միջին և խոշոր ծավալով դրամական միջոցների ստացման գործարքները:**



